

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021թ-ի մայիսի 11-ին ժամը 10:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի շենքում տեղի կունենան «Սևանի ջրավազանային կառավարման պլան»-ի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ (1-ին փուլ): Լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են ստորև աղյուսակում.

N	ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ ծանուցվող տվյալների համար սահմանված պահանջներ	Նախատեսվող գործունեության և հանրային ծանուցման վերաբերյալ տեղեկատվություն
1.	Ձեռնարկող	«Ի ՄԻ Ի Քաուքազու» ՍՊ ընկերություն
2.	Հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության իրականացման վայր	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևանի ջրավազանային կառավարման տարածք
3.	Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցություն	Հայեցակարգային փաստաթղթի հնարավոր ազդեցությունը հիմնականում դրսևորվելու է ջրային ոլորտի և այդ ոլորտի հետ փոխկապակցված շրջակա միջավայրի բաղադրիչների վրա
4.	Փաստաթղթերին ծանոթանալու վայրը, օրը և ժամը	«Ի ՄԻ Ի Քաուքազու» ՍՊ ընկերության գրասենյակ, ք. Երևան, Թումանյան փ. 8, 5-րդ հարկ, 504 սենյակ: 2021թ-ի ապրիլի 29-ից մայիսի 10-ը ներառյալ, աշխատանքային օրերին և ժամերին: Հեռ.՝ (+374 98)-13-14-71
5.	Դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետը	25.05.2021թ, ժամը 18:00
6.	Քննարկումների պատասխանատուի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամար	ecercaucasus@gmail.com (+374 98)-13-14-71

Նախատեսվող հանրային ծանուցումն ու քննարկումներն իրականացվելու են՝ պահպանելով մասնակիցներ միջև անհրաժեշտ ֆիզիկական հեռավորությունն ու քննարկումների օրվա և ժամի դրությամբ ՀՀ օրենսդրությամբ գործող սահմանափակումները: Քննարկումների բոլոր մասնակիցները կապահովվեն դիմակներով, իսկ քննարկումների վայրում հասանելի կլինի բավարար քանակությամբ ախտահանիչ հեղուկ: